



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծով

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan

13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

Registered Charity No 1173403

Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeoghiche.org.uk
www.styeoghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading,

12th December 2021

Bulletin 51/2021

Third Sunday of Advent (Eve of the fast of St. Hagop)

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 2 ԹԵՍԱՂՈՆԻԿԵՑԻՆԵՐ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 1:1-12

Պօղոս, Սիդուանոս ու Տիմոթէոս, Թեսաղոնիկեցիներու եկեղեցիին՝ մեր Հայր Աստուծոյ ու Տէր Յիսուս Քրիստոսով. շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, ու Տէր Յիսուս Քրիստոսէ:

Պարտական ենք ամէն ատեն Աստուծմէ շնորհակալ ըլլալ ձեզի համար, եղբայրներ, ինչպէս որ արժանաւայել է. քանի որ ձեր հաւատքը շատ կ'աճի, եւ ձեզմէ իրաքանչիւրին սէրը կ'աւելնայ իրարու հանդէպ: Ուստի մենք ալ կը պարծենանք ձեզմով Աստուծոյ եկեղեցիներուն մէջ, ձեր համբերութեան ու հաւատքին համար՝ ձեր բոլոր հալածանքներուն եւ տառապանքներուն մէջ, որոնց կը հանդուրժէք: Ասիկա Աստուծոյ արդար դատաստանին ապացոյցն է՝ որպէսզի դուք արժանանաք Աստուծոյ թագաւորութեան, որուն համար կը չարչարուիք ալ: Քանի որ Աստուծոյ քով արդարութիւն է տառապանք հատուցանել ձեզ տառապեցնողներուն, իսկ ձեզի՝ տառապանք կրողներուդ՝ անդորրութիւն մեզի հետ, երբ Տէր Յիսուս յայտնուի երկինքէն՝ իր հզօր հրեշտակներով, բոցավառ կրակով վրէժ առնելու անոնցմէ՝ որ չեն ճանչնար Աստուծոյ, ու չեն հնազանդիր մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի աւետարանին: Անոնք պիտի պատժուին յաւիտենական աւերումով՝ վտարուելով Տէրոջ ներկայութենէն եւ անոր ոյժին փառքէն, երբ ինք գալ փառաւորուելու իր սուրբերուն մէջ, ու այդ օրը սքանչացումի առարկայ ըլլալու բոլոր հաւատացեալներուն մէջ (որովհետեւ դուք հաւատացիք ձեր մէջ տրուած մեր վկայութեան): Հետեւաբար ամէն ատեն կ'աղօթենք ձեզի համար, որ մեր Աստուածը արժանացնէ ձեզ ձեր կոչումին, եւ զօրութեամբ իրագործէ իր բարութեան ամբողջ բարեհաճութիւնն ու հաւատքին գործը. որպէսզի մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի անունը փառաւորուի ձեր մէջ, եւ դուք ալ անոր մէջ, մեր Աստուծոյն ու Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքին համաձայն:

The Epistle of St Paul to the 2 Thessalonians 1:1-12;

Paul, Silas ^a and Timothy,

To the church of the Thessalonians in God our Father and the Lord Jesus Christ:

Grace and peace to you from God the Father and the Lord Jesus Christ.

Thanksgiving and Prayer

We ought always to thank God for you, brothers and sisters, ^b and rightly so, because your faith is growing more and more, and the love all of you have for one another is increasing. Therefore, among God's churches we boast about your perseverance and faith in all the persecutions and trials you are enduring.

All this is evidence that God's judgment is right, and as a result you will be counted worthy of the kingdom of God, for which you are suffering. God is just: He will pay back trouble to those who trouble you and give relief to you who are troubled, and to us as well. This will happen when the Lord Jesus is revealed from heaven in blazing fire with his powerful angels. He will punish those who do not know

Our Aim;

St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

2: A short interpretation of the Scripture reading

God and do not obey the gospel of our Lord Jesus. They will be punished with everlasting destruction and shut out from the presence of the Lord and from the glory of his might on the day he comes to be glorified in his holy people and to be marvelled at among all those who have believed. This includes you, because you believed our testimony to you.

With this in mind, we constantly pray for you, that our God may make you worthy of his calling, and that by his power he may bring to fruition your every desire for goodness and your every deed prompted by faith. We pray this so that the name of our Lord Jesus may be glorified in you, and you in him, according to the grace of our God and the Lord Jesus Christ. ❷

ՅԻՍՈՒՍ ԲՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 14:12-24

Չինք հրաւիրողին ալ ըսաւ. «Երբ ճաշ կամ ընթրիք կը սարքես, մի՛ կանչեր բարեկամներդ, ո՛չ ալ եղբայրներդ. ո՛չ ազգականներդ, ո՛չ հարուստ դրացիներդ, որպէսզի անոնք ալ փոխարէնը չհրաւիրեն քեզ՝ ու հատուցում չըլլայ քեզի: Հապա երբ կոչունք կը սարքես՝ հրաւիրէ՛ աղքատները, պակասաւորները, կաղերը եւ կոյրերը, ու երանելի՛ պիտի ըլլաս, որովհետեւ անոնք չեն կրնար փոխարէնը հատուցանել քեզի. արդարեւ արդարներուն յարութիւն առած ատենը փոխարէնը պիտի հատուցանուի քեզի»:

Հետը սեղան նստողներէն մէկը, երբ լսեց ասիկա, ըսաւ անոր. «Երանի՛ անոր, որ հաց պիտի ուտէ Աստուծոյ թագաւորութեան մէջ»:

Ինք ըսաւ անոր. «Մարդ մը սարքեց մեծ ընթրիք մը, ու հրաւիրեց շատ մարդիկ: Ընթրիքի ժամուն՝ որկեց իր ծառան, որպէսզի ըսէ հրաւիրեալներուն. “Եկէ՛ք, որովհետեւ արդէն ամէն բան պատրաստ է”: Բոլորն ալ միաբերան սկսան հրաժարիլ: Առաջինը ըսաւ անոր. “Ես արտ մը գնեցի, եւ հարկ է որ մեկնիմ ու տեսնեմ գայն. կը խնդրեմ քեզմէ, հրաժարած նկատէ զիս”: Միւսը ըսաւ. “Հինգ գոյգ եզ գնեցի, եւ կ’երթամ որ փորձարկեմ զանոնք. կը խնդրեմ քեզմէ, հրաժարած նկատէ զիս”: Միւսը ըսաւ. “Կնոջ մը հետ ամուսնացայ. ուստի չեմ կրնար գալ”: Ծառան եկաւ ու պատմեց իր տիրոջ այս բաները: Այդ ատեն տանուտէրը բարկացաւ եւ ըսաւ իր ծառային. “Շուտով դուրս ելի՛ր՝ դէպի քաղաքին հրապարակներն ու փողոցները, եւ հո՛ս բեր աղքատները, պակասաւորները, կաղերն ու կոյրերը”: Ծառան ալ ըսաւ. “Տէ՛ր, կատարուեցաւ ինչ որ հրամայեցիր, բայց տակաւին տեղ կայ”: Տէրը ըսաւ ծառային. “Դո՛ւրս ելի՛ր դէպի ճամբաներուն գլուխներն ու ցանկապատերը, եւ հարկադրէ՛ գտածներդ՝ որ հոս մտնեն, որպէսզի տունս լեցուի”: Որովհետեւ, կ’ըսեմ ձեզի, այդ հրաւիրուած մարդոցմէն ո՛չ մէկը պիտի ճաշակէ իմ ընթրիքէս»:



Christ at the Table of Pharisee

The Holy Gospel of Jesus Christ according to Luke 14:12-24

Then Jesus said to his host, “When you give a luncheon or dinner, do not invite your friends, your brothers or sisters, your relatives, or your rich neighbors; if you do, they may invite you back and so you will be repaid. But when you give a banquet, invite the poor, the crippled, the lame, the blind, and you will be blessed. Although they cannot repay you, you will be repaid at the resurrection of the righteous.”

The Parable of the Great Banquet

When one of those at the table with him heard this, he said to Jesus, “Blessed is the one who will eat at the feast in the kingdom of God.”

Jesus replied: “A certain man was preparing a great banquet and invited many guests. At the time of the banquet he sent his servant to tell those who had been invited, ‘Come, for everything is now ready.’

“But they all alike began to make excuses. The first said, ‘I have just bought a field, and I must go and see it. Please excuse me.’

“Another said, ‘I have just bought five yoke of oxen, and I’m on my way to try them out. Please excuse me.’

“Still another said, ‘I just got married, so I can’t come.’

“The servant came back and reported this to his master. Then the owner of the house became angry and ordered his servant, ‘Go out quickly into the streets and alleys of the town and bring in the poor, the crippled, the blind and the lame.’

“‘Sir,’ the servant said, ‘what you ordered has been done, but there is still room.’

“Then the master told his servant, ‘Go out to the roads and country lanes and compel them to come in, so that my house will be full. I tell you, not one of those who were invited will get a taste of my banquet.’”

Ս. Նիկողայոս Զմյուռնացի Սքանչելագործի հիշատակության օր

Ս. Նիկողայոս Սքանչելագործ Հայրապետը ծնվել է 280թ. Փոքր Ասիայի Լիկիա գավառի Բաթարա քաղաքում (ներկայիս Անթալիա քաղաքի մոտակայքում): Փոքր հասակից կորցնում է մեծահարուստ և բարեպաշտ ծնողներին և մեծանում իր քեռու՝ Նիկողայոս Երեց եպիսկոպոսի խնամքի ներքո: Ավետարանական պատգամը՝ «Վաճառիր քո ունեցվածքը և տուր աղքատներին» (հմմտ. Մատթ. 19:21), իր կյանքի նշանաբանն է դարձնում՝ խնամելով աղքատներին, հիվանդներին, բանտարկյալներին և որբերին: Ժողովրդի կամքով դառնում է Զմյուռնիայի եպիսկոպոսը: Հալածանքների ընթացքում աքսորվում է, սակայն չի դադարում ամենուր Ավետարանը քարոզել: Խաղաղության վերահաստատվելուն պես՝ վերադառնում է իր աթոռը, մասնակցում 325թ. Նիկիայի տիեզերածողովին: Մահացել է 326 թվականին: Ընդհանրական Եկեղեցու ամենասիրված սրբերից է՝ առավելաբար հայտնի «Սանտա Կլաուս» անվամբ:

Բարեկենդան Ս. Հակոբի պահքի

Բարեկենդան է կոչվում շաբաթապահքերի և Մեծ պահքի նախընթաց օրը: Բարեկենդանին թույլատրվում են չափավոր վայելքներ, խրախճանքներ, խաղեր և ուտեստներ՝ ի հետևություն Եղիային ուղղված հրեշտակի խոսքի. «Ելիր, կեր, որովհետև երկար ճանապարհ ես գնալու» (Թագ. 19:7): «Բարեկենդան» բառացի նշանակում է կենդանություն, բարի կյանք: Իսկ հաջորդ օրվանից սկսվում է պահքը, որը տևում է երկուշաբթիից ուրբաթ ներառյալ:

Altar Flowers

– Poinsettias, A beautiful Christmas tradition.

St Yeghiche Armenian Church would like to start a drive to adorn the Holy Alter with Poinsettia plants. If you would like to contribute towards the plants, please contact the church office at 020 7373 8133 or a member of the Parish Council at the entrance of the church. Donors will be acknowledged in the Sunday bulletin.



Join St. Yeghiche Choir

Join us in the celebration of the Divine Liturgy, Badarak, at St. Yeghiche Armenian Church in Cranley Gardens. Deepen your faith and discover your talent as a choir member by learning the Armenian hymns and rituals. No prior experience or knowledge is needed. The choirmaster, Aris Nadirian, will help you build your confidence and proficiency in singing the liturgy.

We look forward to welcoming everyone to our choir. Your presence will expand and enrich our choir. For further details, please contact: services@styeghiche.org.uk



Serve the church and your community as a deacon, sub-deacon or acolyte

Join us in the celebration of the Divine Liturgy (Badarak) in the Armenian churches in the UK and become an altar server. Deepen your faith and discover your talents by learning the deacons' duties and singing the Armenian hymns.

No prior experience or knowledge is needed. The clergy will help you build your confidence and proficiency in singing and chanting.

Deacons and altar servers join the Primate and clergy during visits to mission parishes across the United Kingdom.



We look forward to welcoming everyone to serve as Deacons. Your presence will expand and

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

URGENT AID APPEAL FOR LEBANON



What is happening in **Lebanon** these days is inexcusable? It is the culmination of many decades of misrule & corruption across all parties that has further been compounded by a dreadful port explosion a year ago ... and then the meltdown of a whole system.

Today, you **cannot find medicines, you cannot find fuel or diesel, you cannot find many basic staples, you cannot find electricity supplies, you cannot get water, and you cannot even find bread.**

Armenians are not spared this calamity. Whilst there are those who can still out-manoeuvre the system, most Armenians - from Bourj Hammoud to Mar Mikhaël and beyond - are in the same leaking boat as they try to eke out their daily existence. Armenian Schools have reduced their timetable from six days to four days due to fuel shortage and other basic needs. There are a large number of Armenian families (over 3 to 4 thousand) who cannot put food on the table and are reaching to humanitarian cooked food centres for assistance.

In response we are appealing to our Community Members in United Kingdom for support to the Armenian Community of Lebanon, we hereby announce of a fundraising campaign that ACC of UK has started to help our compatriots at this very difficult time.

Over the next four weeks we kindly request and call for a considerable sum to be raised to stand in collective solidarity with our Sisters and Brothers in Lebanon.

“But do not forget to do good and to share” (Hebrews 13:16)

Funds collected will be transferred to the Armenian Humanitarian Organisations such as, Armenian Relief Cross of Lebanon, Jenishian Memorial Foundation, Howard Karagheusian Commemorative Corporation (HKCC) Medical Centre , Armenian Sanatorium of Azrounieh and etc.

We are at the doorsteps of Christmas and New Year, your generosity can help to bring food to those who are in desperate need.

Please make your donations to ACC of UK “Aid Lebanon” in person or by post or electronically to this account as follows:

Bank: HSBC, Name: Armenian Community Council of U.K.

Sort Code: 40-06-19

Account Number : 41606786

Alternately and in addition to above, please donate £5.00, £10.00, £20.00 or more at the safe box located at the entrance of the St Yeghiche Armenian Church.

Thank you for your generosity and May the Lord bless each and every one who helps their Brother and Sister in need.
St Yeghiche Armenian Church Council

PLEASE WEAR YOUR
MASK



To Our Parishioners & Community Members

In line with the latest government announcement, wearing *face coverings* is now compulsory at places of worship

Please comply with this **legal requirement** and help to protect the venerable and each other.

St Yeghiche Parish Council

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցումից.

«Եւ տեսնելով ժողովրդի բազմութիւնը՝ Յիսուս գթաց նրանց, որովհետեւ յոգնած էին եւ ցրուած, ինչպէս ոչխարներ, որոնք հովիւ չունեն» (Մատթ. 9:36):

Քրիստոսի բանական հօտի սիրելի՛ անդամներ,

Մենք, իբրեւ քրիստոնէաներ, մեր հաւատքի եւ սիրոյ ապրումը երկու ուղղութեամբ ենք կեանքի կոչում՝ դէպի Աստուած եւ դէպի մեր մերձաւորը: Յաճախ է պատահում, որ հաւատացեալը՝ աշխարհական լինի, թէ հոգեւորական, այս երկու ուղղութիւններից մէկի բեւեռացմամբ անտեսում է միւսը:

Երբ սա աւելի մեծ՝ հանրային, համայնքային, եկեղեցական իմաստով ենք նայում, լուրջ մտածումի, անդրադարձի առիթ ենք ունենում: Սովորաբար այս բեւեռացումներն արւում են «Յանուն մարդու...», «յանուն Աստծոյ...» եւ նման շատ այլ կարգախօսներով, բայց արդիւնքը նոյնն է՝ թշնամութիւնները, բաժանումները, շահարկումները ոչ միայն չեն պակասում, այլ աւելանում են: Գուցէ քրիստոնէայ հասարակութիւնների համար կարող ենք ասել, որ թերեւս անցեալում են մնացել մոլեռանդ ծայրայեղ մօտեցումներով հետապնդումները, Աստծոյ անունով գործադրուող հաւատաքննական մահապատիժները, քաղաքական շահարկման միջոց եղած եւ յաճախ պատերազների վերածուած կրօնական վէճերը: Բայց, ցաւ ի սիրտ, կրկին պիտի անդրադառնանք, որ միջքրիստոնէական կամ միջեկեղեցական երկխօսութիւնները, յաճախ մնալով կրկին առաւել իբրեւ քաղաքական գործիք, նաեւ շատ առումներով զրկուել են հոգեւորութիւնից՝ վերածուելով նիստերի, քննարկումների, կոնֆերանսների, հոգեւոր հարցերի անուան տակ քաղաքական ազդեցութիւններ փոխանցման միջավայրի:

Հաճոյ լինել Աստծո՞ւն, թէ՛ մարդկանց: Հոգեւորականը սպասաւորն է Աստծոյ եւ միաժամանակ եկեղեցու, որ Քրիստոսի մարմինն է՝ կազմուած քրիստոնէակներից.... Արդեօ՞ք հակառակ բեւեռներ են Աստծուն համար անելը եւ մարդկանց համար անելը, թէ՛ մեր մտքում են արհեստականօրէն բեւեռացւում: Չպիտի մոռանանք, որ Աստուածորդին մարդու համար հէնց իջաւ երկնքից «մարմնացաւ, մարդացաւ, կատարելապէս ծնուեց Սուրբ Կոյս Մարիամից... չարչարուեց, խաչուեց, երրորդ օրը յարութիւն առաւ, նոյն մարմնով երկինք ելաւ»: Աստծոյ սիրոյ կենտրոնը մարդը եղաւ, որպէսզի մարդու սիրոյ կենտրոնն էլ Աստուած լինի՝ այլ մարդկանց այդ աստուածային սիրով սիրելու համար:

Ժամանակակից քրիստոնէական եկեղեցիների ամենամեծ խնդիրը այս հաւասարակշռութիւնը պահելն է: Տիրութեամբ կարելի է արձանագրել, որ քրիստոնէական աշխարհի մեծ մասում մարդակենտրոն մօտեցման բեւեռացում կայ, երբ «Տէր» ենք կանչում Աստծուն, բայց կարծես ամէն բանում փորձում ենք ծառայեցնել, մեզ յարմարեցնել Աստծուն:

Անշուշտ, հակառակ մօտեցումը եւս, ընդունելի չի կարող լինել, երբ Աստծուն ծառայելու եւ պաշտելու անուան տակ անտեսում է մարդը՝ իր կարիքներով, ցաւերով, խնդիրներով եւ սիրոյ պակասով: Պատմութիւնը լեցուն է հաւատքի անունով հալածանքներով, բռնութիւններով, բանտարկութիւններով, մինչեւ անգամ սպանութիւններով: Ծատերի համար երազելի եւ լուսաւորեալ 21-րդ դարն իսկ իր ապրած դեռ երկու տասնամեակներով լեցուն է արդեն հազարաւոր նման օրինակներով:

Այսօրուայ մարդկութիւնն էլ հոգեւոր իմաստով «ցրուած է, ինչպէս ոչխարներ, որոնք հովիւ չունեն»: Քաղաքակիրթ աշխարհի խոշոր հատուածում այսօրուայ հաւատքը քաղաքականութիւնն է, ուր դրախտներ խոստացող կուսակցութիւնները եւ կառավարութիւնները մարդկանց վստահութեանն արժանանալու համար հնարաւոր ամէն միջոց են գործի դնում՝ «յանուն մարդու բարօրութեան, խաղաղ, անվտանգ եւ արժանապատիւ կեանքի»: Թւում է, այո, հէնց սա է մարդկանց ուզածը: Բայց ինչո՞ւ է այդ դէպքում ինքնասպանութիւնների, դէպրեսիաների, նեարդային եւ հոգեկան խանգարումների ամենամեծ ցուցանիշը հէնց այս հասարակութիւններում:

Բաց է հոգու հարցը, Աստծով հարստանալու եւ կերակրուելու հարցը: Որքան էլ սնես, կերակրես, խնամես մարմինը, առանց հոգու այն դիակ է, կենդանւոյն մեռեալ: Մենք «յանուն մարդու» կարգախօսով բեւեռանալով՝ անտեսել ենք մարդու կեանքին արժէք եւ իմաստ Տուողին: Պատմութեան մէջ հաւատքային որոշ ծայրայեղ դրուագների տխուր յիշողութիւնը մեզ այժմ այլ ծայրայեղութեան գիրկն է նետել՝ զոհել Աստծուն ամբողջութեամբ «յանուն մարդու»: Մենք մոռացել ենք, որ Աստուած Իր Որդուն դրա համար երկու հազար տարի առաջ արդեն ուղարկել է, այդ զոհաբերութիւնը Յիսուս խաչի վրայ կամաւոր արել է արդեն՝ նպատակ դնելով մեր հոգու յաւիտենական փրկութիւնը: Իսկ այժմեան «քրիստոնէայ» հասարակութիւնները զոհում են Աստծուն յանուն մարդու մարմնի, ոչ թէ յանուն հոգու եւ նրա փրկութեան....

Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

By the Armenian Community in United Kingdom for the **over 25 Thousand innocent Souls** of their Compatriots who perished in the 1988 earthquake in Armenia

By the Manoukian Family for the soul of their Mother, who was also a loving Grandmother and Great-grandmother the late **SIRANOUCHE MANOUKIAN (Սիրանուշ Մանուկեան)** on the anniversary of her passing, and for all the old and new deceased members of the **MANOUKIAN** Family

By Mrs Alice Ohanian and Family for the soul of their Husband, who was also a loving Father and Grandfather the late **NSHAN OHANIAN** on the 15th anniversary memorial of his passing, also for all the old and new deceased members of the **OHANIAN** Family.

By Mr & Mrs Setrag and Jacqueline Karanfilian and Family for the souls of their Parents who also were loving Grandparents **KHOREN** and **OVSANNA KARANFILIAN (խորեն և Ովսաննա Քարանֆիլեան)**, and for the soul of their Brother who also was a loving Uncle **Dr HRANT KARANFILIAN (Տորթ Հրանդ Քարանֆիլեան)**, and for all the old and new deceased members of the **KARANFILIAN** and **STANBOULIAN (Քարանֆիլեան և Ստանպուլեան)** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

HOKEHANKIST AND IN LIEU OF FLOWERS Friends and family of the deceased can make donations, in memory of their loved one, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund for prayers or in lieu of sending flowers.

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers. Your kind donations are gratefully accepted:**

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

We welcome your donations for prayers and support towards church annual expenses. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all your prayers and dreams.**

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: **“St Yeghiche Armenian Church”**.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions. *Thank you.* **St Yeghiche Armenian Church Parish Council**

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403. Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.

